Քրիստոսից առաջ, ծածկուած էին ծաղկեալ քաղաքներով, որոնց գեղեցիկ փլատակները՝ հակառակ իրանց ամայի շրջակայքին՝ զարմացնում են այժմ: Մեռեալ ծովի, Եփրատի եւ Պարսից ծոցի մէջերքում պահպանուել են աւելի քան 30 ընդարձակ քաղաքների հետքեր եւ այնպիսի տեղերում, ուր այժմ թափառական արաբը հազիւ թէ գտնում է ուտելիք իւր թշուառ հօտի համար: Դիւթական ոյժը, որ արտադրել էր այս քաղաքները, Հնդկաստանի վաճառականութիւնն էր Եւրոպայի հետ՝ Եփրատի վրայով: Իսկ երբ բացուեց այլ ճանապարհ, այդ քաղաքներն իրանք իրանց ոչնչացան:

“Երբեւի “Բարեյուսոյ գլխի„ գիւտն եւ հնդկական վաճառականութեան նոր ծովային ճանապարհի ուղղութիւնն ունէին աւելի ազդեցութիւն Հայոց Թագաւորութեան անկման վրայ, քան մահմեդականների եւ դրացի գիշատիչ ազգերի բոլոր ասպատակութիւնները: Սրանից յետոյ, հայրենիքում առեւտուրից զրկուած հայ կապիտալիստները՝ հանգամանքից ստիպուած՝ պէտք է գաղթէին Կ. Պոլիս, Պարսկաստան, Հնդկաստան, Աղէքսանդրիա եւ այլն: Սրանց հեռանալով, Հայաստանի վաճառականութիւնը կորցրեց իր նշանակութիւնը: Գուցէ այս հանգամանքն էր որ Շահաբբասի կամայականութիւնը ստիպեց Ջուղայեցիներին գաղթել դէպ ի Սպահան:„

Թէեւ դժուար է ընդունել Շոպէնի այս կարծիքը, քանի որ Առաքել վարդապետ, Շարդէն, Օլէարիուս, Բէհման-Միրզա խիստ բացայայտ կերպով աւանդում են, որ Շահաբբաս բռնութեամբ գաղթեցրեց Ջուղայի բնակիչներին, բայց եւ այնպէս գուցէ Շոպէնի առաջ բերած հանգամանքն ազդեցութիւն է ունեցել